



Ա Մ Ս Ա Գ Ի Ռ

Վեցերորդ Տար
Թիվ 3.

Տար 31.
1871.

Ա Զ Գ Օ Յ Ի Ն , Բ Ա Ն Ս Ս Ե Ր Ա Կ Ո Ն Ե Ւ Գ Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ո Ն

Ս Ի Մ Ո Ն Գ Ե Տ Ր Ո Ս (*)

Եթէ ասենք որ Ամմանը լիմ էր ,
որուն վրայ պիտի շնուռէր Յիսուսի
Քրիստոսի կեղեցին , դարձեալ կա-
րող չենք պնդել , որ Պետրոս պիտի
լինէր առաքելապետ կամ առաքելոց
առաքեալ , և միայն ինքն էր զրահա-
ւորուած անսխալականութեան զրու-
հով իւր ընկերակից աշոկերուաց մէջ
որոնք ամենքը վկայ էին Յիսուսի Քը-
րիստոսի յարութեանը և հազարդակից
էին Հոգւոյն Արքոց նորհացը և լու-
սոյն : Կարող չենք պնդել , որ Պետրոս
առաքելապետ պիտի լինէր , վասն զի
Յիսուսի խօսքերուն մէջ ամենեւին
պդպիտի խմաստ քիոյ : Խակ եթէ ա-

ռաքելական Ակեղեցւոյ պատմութեա-
նը հաւասարով՝ Պետրոսին ըստ տանք
առաքելապետութեան իրաւունք , և
միայն իւր ամռուին եւ յաջորդացը
տանք , (այնպէս համարելով թէ ա-
թոռ և յաջորդներ ունի ,) եթէ Յի-
սուսի այս սպարզ խօսքը - Դու Խ Ա Տ-
Ե Ւ Ֆ Ե Ր Ա յ Ա Ր Ա վ Ա Շ Ե Ր Ա վ Ա Շ Ե Ր Ա վ Ի-
այնպէս մեկնենք , որ ոչ թէ Պետրո-
սին , այլ Պետրոսին զատ , Համբայ-
բորբ եպիսկոպոսները նոյն խոսաման
ժառանգորդներն են , որ Պետրոսին
տրուեցաւ , և նոքա միայն իրենց ան-
ձին մէջկ'ամփոփեն գերիշխանութիւն
ամեն ամռուոց և համայն առաքելոց .
եթէ ասենք որ Յիսուսի խօսքերը Պետ-
րոսի նկատմամբ անհան են , բայց

(*) Ծարուշակութիւն , տես թիվ 2:

իւր յաջորդաց համար գերիշխանութեան նշանակութիւն ունին, այսպիսի թիւր դատողութեամբ իրաւունքը մեկնութեան վրայ հաստատած կը լինինք և ոչ թէ մեկնութիւնը՝ իրաւանց, այսինքն չը կարենալով Ա. Գրոց բնագիրներուն վրայ մարդկային չէնք կառուցանել նոցա իմաստը կը փոխենք և մեր ձեռակերտին կը յարմարեցնենք. կամ աւելի պարզ ասել, մեր մարդկեղէն կարգադրութեան կամ չէնքին մէջ աստուածային խօսքերու իմաստ կը փնտառենք, փոխանակ աստուածային խօսքերու մէջ մեր հիմնարկութեան վճիռը փնտռելու: Իսկ և իսկ սոյն ձանապարհաւ կընթանան եպիսկոպոսունք Հռովմայ, որոնք ոչ թէ աստուածային խօսքի վրայ կը հիմնեն Պապական իշխանութիւնը, այլ Աստուծոյ խօսքը կը ջանան հիմնել Պապական իշխանութեան վրայ: Այսպէս ահա քրիստոնէական սկզբունքները թիւր մեկնելով՝ կը կործանեն և կը տապալեն հաւատոյ հիմունքը, կը թիւրեն Ա. Գրոց իմաստը ամենասոսկալի և քմածին մտահաճութեամբ. կը բառնան ամեն կնիք սրբութեան, կը պատռեն ամեն ցանկ և պատռար ամբը ծութեան և լայն տապարեզ կը բանան, որ Ճշմարտութիւնը ուժնակոխ լինի և կատաղաբար յորդեն այլանդակ կասկածներ և տարակյաներ ընդդէմ Աւետարանի: Ոիսվ բանիւ, չութիւն մի յանդգնաբար հաստատել ջանալով, իրաւունք կուտան ամենակերպ ուրացութեանց և բացասութեանց: Կատ բաներ կան, բայց մենք չենք ուղեր երկարել մեր խօսքը: Պապականաց փաստաբանութիւնքը առանց փաստի են և առանց ապացուցի: Եղքա Ճշմարտութիւնը փոխած են ստութեան, և յայոնի ըյոցը

վարագուրած են խաւարամիտ մեկնութեամբ, որով և ամենասպարզ մըտքերը երկրացութե հողմերուն մատնած են և ամենահաստատ ոգիները ալեկոծ և յազդողդ վիճակի հաստացած: Այս ահա այս է բուն պատճառըն, որ սկեպտականութիւն կամ մըտաւոր վարանքը յորդան տալով մուտքործած է թէ Ակեղեցւոյ մէջ և թէ ընկերականութեան:

Այսպէս ուրեմն, Յիսուսի խոստումն առ Ոիմն ամենեւին չունի և կարող չէր ունենալ այն տարապայման իմաստը, զոր հնարեցին թիւր մեկնիչք: Բայց ի հարկ է մեր Փրկչի խօսքերը անշուշտ իմաստ մի ունին: Այս միթէ ինքնին բացայատ չչ այս իմաստը, և ինչ հարկ կայ երկար որոնելու:

Աթէ Աւետարանիները և Պործոց պատմիչը հաւասար տեսութեամբ կը նային Պետրոսի վրայ, ինչպէս միւս Աւետից վրայ, այս մասին բնաւ պիտի չը զարմանանք և պիտի չը կարծենք թէ՝ Յիսուսի մարդարէութիւն նշանակութիւն չունէր: Աթէ ոչ բոլորովին, գէթ մասամբ Ակեղեցւոյ շնութեածը պիտի բարձրանար Պետրոսի վրայ, և մենք, 19 դարերէն ըզկնի, կարող ենք Ոիմնը վէմ կամ ժայռ համարիլ, յորմէ կոփուեցան իւր քարոզութեանը հաւատացողները. Եայի. ծ.Ա. 1: Աթէ Յիսուս, տարբեր, բայց Ճշմարիտ անուն մի տալով Ոիմնին ասած լինէր՝ Դու ես հայ Ճշմարտութեան, և այս հայով ես պիտի անուշանէմ Ակեղեցին: և կամ թէ՝ Դու ջուր կենաւնի Վարդապետութեան, ես այս ջուր պիտի արդուցանէմ Ակեղեցին՝ բնաւ կարող չէնք հետեւցնել թէ՝ Պօղոս, Յովհաննէս, Յակովոս, Այօղոս, Տիմոթէոս, Թագէոս, Բարդուղիմէոս և այլք իրաւունքը չունին մասնակցելու սոյն անուանակոչու-

թեանը.վասն զի մի է ամենուն ուսած ճշմարտութիւնը , վարդապետութիւնը և դաւանութիւնը : Այս ապաբէն ինքն իսկական հացն և կենդանի ջուրըն Յիսուս Քրիստոս փոխարկեց իւր առաքեալները ՚ի հաց և ՚ի ջուր կենդանի : Խնչպէս կը զսնար ուրեմն երկնաւոր վարդապետը միւս առաքելոց կոչումը , որոնք ամենեքեան քարինք էին և մասունք անկեան Վիմին Յիսուս սի , որուն վրայ շնեցաւ Ակեղեցին . Արդ , Եթէ Յիսուս Ոիմնի անունը փոխած չը լինէր միւս առաքելոց պէս և Պետրոս կոչած , դարձեալ Փրկչի խօսքը իւր նշանակութիւն պիտի ունենար Ախմոնի առաքելութեան նկատմամբ , վասն զի նա եւս միւս առաքելոց պէս աշխատեցաւ Աւետարանի լոյսը երկրիս վրայ տարածելու Այսկայն գուցէ հարցուի թէ ինչո՞ւ համար միայն Ախմոնի անունը փոխուեցաւ և Այս իրշուեցաւ : Այս պիտի հարցում մի երբէք կարող չէ առաքելական պաշտօնի մէջ առանձին արտօնութիւն տալ Պետրոսին . Որչափ կամին թող մեկնեն , ինչդէս կամին թող մեկնեն , առաքելութեան մէջ բացառութիւն չըկայ : Առաքելութե կոչումը հաւասարութեան վրայ հիմնած է , Հոգւոյն Արքոց շնորհքը հաւասարապէս սփռուած է ամենուն վրայ և Աւետարանի իւրաքանչիւր խօսքերէն հաւասարութեան անուշահոտութիւնը միայն կը ծաւալի : Ինտելացէք միանդամ Աւետարանի ոգւոյն , ջնջեցէք այն կանխակալ մտածութիւնները , որովք ջանացին ումանք մասնաւոր առանձնաշնորհութիւններ մնատուել Պետրոսի վրայ , փարատեցէք մի անգամ ամեն մթութիւն և մըռայլ . զըր կուտակեցին Պետրոսի վրայ թիւր մեկնութեան ամսերը , և խեկոյն կը տեսնէք , որ Յիսուս սի խօս-

քերը պայծառ են իբրեւ լոյս , և կը լուսաւորին ամեն միոք որ լուսոց կը փափաքի :

Կմեն գործոց մէջ , Եթէ սկզբունքին նայինք , կը տեսնենք որ Աստուած միայն ինքն կը գործէ և իւր փառքը ուրիշն չըտար : Բայց Եթէ սկզբունքի բարձրածութենէն դէպ ՚ի վար նայինք , կը տեսնենք որ , արդարեւ Աստուած կը գործէ , բայց ունի նմանապէս և գործակիցներ : Վարդիկ գործակից են Աստուածոց , վասն զի ինքն այսպէս կամեցաւ : Տարակոյս չը կայ որ մարդկանց գործը Աստուածոց կը պատկանի ինչպէս և մարդիկ ինքեանք , որոնք Աստուածմէտ ստեղծուած և զօրութիւն ստացած են գործելու համար : Բայց շատ անդամ Աստուածոց գործը մարդկանց ձեռքով կը գործուի , թէ և տարբեր եղանակաւ և տարբեր աստիճանաւ : Օրինակի համար դիւցանական թատրերգութիւն մի կը ներկայանայ մեզ և կը տեսնենք որ գերերը տարբեր են , թէ և ամենքն եւս իրենց տեղը և արժէքը ունին : Կմեն տեղ , ամեն ժամանակ և ամեն գործողութեան մէջ մարդիկ կան , որոնք այլոց օրինակ տալու համար առաջ իրենք կըսկսին , իրենք կը ձեռնորկեն եւ իրենք ճանապարհը կը հարթեն : Կմեն ընկերութիւն և ամեն հասարակութիւն , ամենէն ազատն անդամ , երբ նշանաւոր գործ մի կատարել կը փափաքի , երբ երեւելի յեղաջրօւմ մի առնել կը ձգտի , միշտ այնպիսի անհատներ կ'որոնէ , որոնք աւելի ընդունակ են գործոց յառաջադիմութեան համար : Այսպէս ևս , Աստուած , իւր երկնաւոր թագաւորութիւնը հաստատելու համար , կը յարուցանէ նոյնպիս անհատներ : Քանի որ մարդկային բնութիւնը այսպէս է , թէ ընկերական և թէ կը ո-

նական ասպարիզին մէջ, միշտ մարդիկ պիսի գտնուին, որոց միայն յաւ տուկ է սկիզբն առնել որ և իցէ մեծ գործողութեան, որոց միայն տրուած է առաջին անգամ դրօշ պարզել և հասարակաց շարժմանը կարապետ լինիլ, Աշխարհիս ամեն մեծամեծ իրողութեանց մէջ, որոնք փոփոխած և յեղաշրջած են երկրիս երեսը և մարդկանց մոքերը, հասարակաց բազմութիւնը միշտ առաջնորդ մի ունեցած է: Հասարակութիւնը միշտ առաջնորդ կը վնասէ, ոչ թէ գաղտփար ներ ստանալու համար, այլ իւր ունեցածները իրագործելու համար, վասըն զի եթէ գաղափարներ չունենար, առաջնորդ եւս չէր փնտռեր: Ըստ անգամ եւս, տակաւին հասարակութիւնը լցինուած, ամենէն եռանդուար, ամենէն զօրաւորը, բայց ոչ թէ միշտ ամենէն ընտիրն և լուսաւորեալն, ինքնին յառաջ կը խաղայ, ինքնին ձեռն կը խմէ, և երբեմն ինքն միայնակ է բոլորովն և միայն իւր համար կ'աջնատի, բայց կը տեսնես որ իւր պարզած դրօշին ներբեւ բազմաթիւ բանակ կը համախմբի: Յօթէ բանանք մարդկային ազգի պատմութիւնը՝ հարիւրաւոր օրինակներ կը ներկայանան մեր աշքին կըզգա՞ր արդեօք | ութեր ժողովուրդի ապագայ յայզը, լուսաւորը, բայց երբ անվեհեր նշան տուաւ և դրօշ պարզեց Պապական իշխանութեան դէմ, բիւրաւոր մարդիկ սոսկալի պատերազմի դաշտը նետուեցան և հետեւեցան | ութերին: Ո՞վ կը կարծէր իսկզբան թէ աննշան կրօնաւոր մի պիտի կարենար վեր ՚ի վայր ցնցել դարերով բարձրացած Պապական իշխանութեան շէնքը և անկանգնելի կերպով հարուածել: Բայց ինչո՞ւ | ութերի վրայ խօսինք, մինչդեռ աւելի մերձաւոր որ կեղեցիկ

ունինք մեր առջեւ: Աէդ Տրդատայ ահուելի բանակին և լէպէօնին մէջ սպասուպարու ած ստակական զինուոր մի, Ո. Դրիգոր, կոտապաշտութեան արհաւ բանաց դէմ խաչ դրօշը կը պարզէ, դասն տանջանաց կը մատնուի, եւ սակաւ ժամանակէն զինի, կը տեսնես որ Եփրամայ տփանց վրայ հաւատավ զինուորեալ լաւատեսիլ բանակներ կենարար խաչ դրօշին տոկ կը տազուարին, միլրատելով ՚ի ջաւը սրբութեան, ՚ի հաւր զօրութեան ՚ի Հոգին Առերբ: Այսպէս ես, չը ժըստ տենք որ քրիստոնէական առաջնորդին Եկեղեցւոյն մէջ Պետրոսի մանձը յաճախ կը ներկայանայ մեզ, ինքն կը հնչեցնէ քրիստոնէական քարոզութեան առաջնորդն բարբառը, բայց երբէք իշխանական իրաւունքը չը վերագրէր իւր անձին: վասն զի եթէ Հըրէաստանի մէջ ինքն առաջնորդն անգամ կը խօսի, Հեթանոսութեան մէջ Պօղոսն ու Ապօղան, Յագէոսն ու Բարդուղիմէոսն են, որք առաջնորդ կը հընչեցնեն աւետարանական բարբառն, Բայց եթէ լաւ խօրհինք, կը տեսնենք որ Աւետարանի քարոզութեան սկըզբնաւորութիւնը և ոչ մէկուն կը վերաբերի: Վասն զի աւետարանական քայլուալուր բարբառոյ առաջնորդն հընչեւը Շեթզէ հեմի մասւրին մէջ կը լուսուի և Պաղդուայի բարձր դիտանոցին վրացէն իւր լուսւմն կ'առնու: Քրիստոնէութեան սկզբնաքարոզին նոյն ինքն Քրիստոնէ, խոկ առաքեալք նորա հետեւողըն են և քրիստոսեան աւագալուր ձայնի կրկնողքն: Աւրեմին ուր մնաց այս մասին Պետրոսի կարծեցեալ իրաւասութիւնը:

Արդէն քրիստոնէական նորածին Եկեղեցւոյն մէջ, որ Քրիստոսի շուշը կը ժողովուէր, մինք բնաւ շնչել նշանը, որ Քրիստոս առաջնորդն աւելը

Պետրոսին տուած լինի, վասն զի առաջին տեղը և ոչ մէկուն կը պատկանի, Վ'նչափես պքանչել են Փրկչի այս խօսքերը, զոր արտասանեց Օերե, թեայի որդւոց մօր հարցման առթիւ. “Որ կամիցի կ'ձենջ առաջնին լինի՞ւ եղիցի ձեր ծառոյ, ” Ա. 27. Փրկչի բերանէն բնաւ այնպիսի խօսք մի եւած չէ, որով կարենանք հետեւ ցընել թէ նա Պետրոսին գերիշխաւ նութիւն տուած է միւս առաքելց վլայ. Վ'նչք եւս կարող չնիք, արտաքց Վ'ւետաշանի, Պետրոսեան գերիշխանութիւններապել, Վ'նչ կըտեսնենք. Աոր Կտակարանի մէջ Պետրոսին նկատմամբ, թուենիք մի առ մի, որպէս զի ընկարծուի երբեք՝ թէ մ.նիք կանխակալ նախապաշարում ունինք և կողմնակի կը վարուինք մեր դիսողութեան մէջ: Յուուենիք մի առ մի, որպէս զի բնաւ երկայսութեան աեղի ընթողունք մեր ասացուածոց մէջ:

Չենք ուրանար, որ Յիսուս յաճախ իւր խօսքը Պետրոսին կ'ուզզէ և Պետրոս յաճախ կը խօսի իւր ընկերակցաց կողմէն: Չենք ուրանար, որ Յիսուս գոգցես մասնաւոր մտադրութիւն կը դարձն: Պետրոսի վայ, կը պատրաստէ, կը կրթէ, կը փորձէ: Պետրոս գոգցես գործի մ'է, զոր Յիսուս կը յարդարէ. մետաղ մ'է, զոր կը զոէ. սուր մ'է, զոր կը սրէ: Պետրոսի կրթութեամբ կը կրթին եւ միւնները. Չենք ուրանար, որ Վ'ւետարանի ներկայացուցած առաքելական անուանց շարքին մէջ Պետրոսի անունը յաճախ առաջն տեղը կը դրաւէ: Չենք ուրանար նմանապէս, որ Պետրոս ինքն կ'առաջարկէ երկոտասաներորդ առաքեալը ընտրել ՚ի տեղի Յիսուսային, “Որ անկաւ և գընաց ՚ի տեղի իւր. ” Ա. 25. Իսկ Հոգւցն Որբայ գալստենէն զինի, երբ

իզուաց շնորհը ափոեցաւ, երբ արէից բազմութիւնը խսնեցաւ, որոնք թիւնաւորուած չէն քահանաներէն, երբ երկրի շարժման հետ մարդկանց սրաերն եւս շարժեցան, գարձեալ Պետրոսն է, որ կը հրաւերէ նորընծաները ՚ի մկրտութիւն և երեք հազար երկրպագուներ կ'ըսկսին երկիրպագանել Վ'ստուծոյ հոգւով եւ ձմարտութեամբ այն քաղաքին մէջ, ուր սպանաւ Քրիստոս, Քանի մի օր կ'անցնի, Պետրոս այն հոււտով ոգեւորուած, որոց մի հատիկն ընոներ կը անշափակիտէ, առաջի բազմութեան հրաշալի բժշկութիւն մի կը կատարէ: Պետրոս, իւր նոր քարոզութեան համար, շղթայի կը մատնուի, բայց հինգ հազար անձինք կը կոչէ ՚ի խոստովանութիւն նոր հաւատոյ: Պետրոս կը կալանաւորի և երբեք իւր ազգեցութիւնը ընուազիր: Պետրոսի ազատութիւնը զինքը յառաջ կը մղէ գէպ ՚ի ամբովոը, իսկ նորա կալանաւորութիւնը կամ գերութիւնը առ ինքն կը բերէ հրեական քահանայ յութեան անդամները, Պետրոս կը յայսնէ քահանաներուն, ինչպէս և ամբովին, մարդկանց երկնաւոր Հօրդութեան խորհուրդը. Եւ առաջն անգամ, Պետրոսի կալանաւորութեան ընկերակիցն Յովհաննէս կը խոցէ իւր լուսութիւնը, կը գործակցի Պետրոսին, կը հոչաշկէ, կ'աւետարանէ երկնաւոր այցելութիւնը, խաղաղութեամբ ու պարզութեամբ սարսափ կը տարածէ քահանայից սրտերուն մէջ և կը գատապարտէ նոցա անդործութիւնը: “Եթէ արժան իցէ առաջի Վ'ստուծոյ՝ ձեղ լսել առաւել քան Վ'ստուծոյ, ընտրեցէք. ” Գործ. Դ. 49. Պետրոս ազատուելով՝ գարձեալ իւր տեղը կը դրաւէ առաքելոց մէջ և կըսկսի գործել: Աոր

Կոտակարանի մէջ երկու սոսկալի հրաշեց առաջնին Պետրոսին կը պատկանին ։ Երածայնին Ենանիա և Ապօփոյ յանկարծաման կը լինին իրենց կեզծքարեպաշտութեան եւ ստախօսութեան համար ։ Ուսուցանելն եւ վարդապետելն ամեն առաքելց կը պատկանի, որովհետեւ ամենքն եւս ընկալան Հոգին Սուրբ ։ Տայց ձեռնար կութեան կամ սկզբնաւորութե մէջ մասնաւոր յատկութիւն մի կ'երեւի Պետրոսի մէջ, մինչեւ որ կեդրոնները կը բազմանան, նոր Լիկեղեցին քանի մի նորերը կը ծնանի, և իւրաքանչիւրն, առաջնոյն պէս, իւր յառաջամարտիկն կ'ունենայ ։ Փիլիպոս կ'ուսուցանէ և կը սերմանէ Եւետարանի նոր սերմունքը Սամարիայի մէջ, Պետրոս, առանց սերմանելու, կը վազէ և կը հնձէ ։ Ես խուրձ կը կապէ, կը կարդաւորէ և Փիլիպոսին հետ կը խնդակցի ։ Պետրոս այցելութեամբ կը շըմի ամեն Լիկեղեցիներ ։ Գործ թ. 52: Ի՞ա՞լ է արդեօք այսքանը ։ Ոչ, Պետրոս աշխատանք մի եւս ունի, զոր պիտի յիշեցնք ։ Պետրոս հանդիսապէս հեթանոսներ ևս Լիկեղեցւոյ ծոցը կը մուծանէ ։ Ըստանօր եւս, առաւել գործ կ'երեւի, քան թէ ուսուցանել Պետրոս ոչ հնարեց, ոչ գտաւ, ոչ յշացաւ և ոչ մտաբերեց, որ Ծառուծոյ շնորհքը ընդհանրական է ։ Ես մի այն տեսիլ մի կը տեսնէ, որուն խորը իսկզբան անթափանցելի է իրեն համար ։

Այս տեսլեամբ կ'ուսանի, կը պատրաստուի Պետրոս յառաջնելու դէպ ՚ի մի անակնկալ և նոր ճշմարտութիւն, կամ, աւելի պարզ ասել, դէպ ՚ի զարդացումն, դէպ ՚ի հանրական ծաւալումն աւետարանական մեծ ճըշմարտութեան ։ Պետրոս ոչ թէ կ'ուսուցանէ, այլ ինքն է որ կ'ուսանի,

երբ Ծառուծոյ հրամանաւ կուռնէլիս հարիւրապետի տունը կ'առաջնորդուի, և այն տեղ իւր տեսլեան մեկնութիւնը կը գտնէ ։ և երբ կը տեսնէ, որ Հոգին Սուրբ սիրած է իւր պարզեւները և դրօշմած է իւր կնքով այն մարդիկը, որոնք ոչ Հոգայ են և ոչ սերունդ Հոգեից, զարմացմամբ կը հրատարակէ Հեթանուաց կոչման նոր և հրաշալի աւետիքը և կ'աղաղակէ մարդարէին հետ ։ Ա Աւրախ լեր, ամսուլ, որ ոչ ծնանէիր, գուշեամ և աղաղակեամ որ ոչդ երկնէիր . . . ընդարձակեամ զտեղի խորանի քո և զրահից քոց ։ կանգնեամ և մի անխայեր . . . ո Եսայի ։ Ճ. 4-5: Ուր կը մնան Պետրոսի հրէականնախկին նախապաշտրմունքները սոյն օրինակ յայսնութեան առջեւ ։ Ովկ կարող է ընդդիմանալ և արդելուլ մը կը րատելու այն մարդիկը, որոնք ընդունած են Հոգին Սուրբ: Ալ տարակուսի արդեօք Պետրոս, կը տատամանի, կ'երկմոնի: Ոչ երբէք: Ես կը տապալէ այն պատուարը, այն ցանկը, զոր սակաւ ինչ առաջ անկործանելի կը կարծէր ։ Ես իսկցին կը դադարի հրէաւթենէ, ինչպէս և նորահաւատները կը դադարին հեթանուտութենէ, Պետրոս կը հեղու մլըր տութեան ջուրը հեթանու գլուխներուն վրայ, և կուռնէլիսուի յարկին տակ կը կատարուի Ծառուծոյ ամենամեծ խոստումը և կը բացուի քրիստոնէութեան անհուն ապագան:

Վհա առանց զանալու թուեցինք մի առ մի Պետրոսի գործքերը, որ պէս զի չասեն մեզ թէ միայն Եր կտակարանի մի երեսը կը կարդանք, Խսկ այսուհետեւ միայն Պետրոսի անունը և հետքը պիտի տեսնենք: Ուրոնեցէք, հետազոտեցէք, շերեւիր Պետրոս: Դոգցես կը ծածկուի Պետ-

բոսի անձը և կը լուէ նորա անունը .
Պետրոսի գործը տակաւին առ արտը-
ւած չէ : Այս պիտի աշխատի մինչեւ
իւրնահատակութեան վերջին և բեղ-
մաւոր հանդէսը : Բայց քարոզու-
թեան առաջին մղումէն զինի՝ Պետ-
րոսի դերը նոյն չէ : Այս իրօք և լու-
թեամբ կը հրաժարի այն առաջնու-
թենէն, զոր առ ժամանակ մի կը վա-
րէր : Հին Հռովմաց դիբատարբնե-
րուն նման նա կը դառնայ դէպ ՚ի ա-
րօրը : Եւ այսուհետեւ, եթէ վա-
փագինք առաւելութիւն մի կամ ա-
ւագութիւն մի փնտուել Պետրոսին
վրայ, ուրիշ բան չենք գտներ, բայց
միայն հեղութիւն և խոնարհութիւն,
Ովկարող է կարդալ և կամ ովկ կար
դացած է երբէք Պետրոսի թղթերը,
առանց նշմարելու նորա հեղահամ-
բոր և խոնարհ հոգին, Բայց էք նորա
թղթերը և կարդացէք : Ուր է այն
անհամբեր և խրսխտ Ախմանը, որ կը
հարկանէ քահանայապետի ծառան,
Մատ. 12. 51 : Ուր է այն յանձնա-
պաստան Ախմանը, որ կը համարձակի
ասել իւր փարտապետին . “ թէպէտ
և ամենեքեան գայթակղեսին ՚ի քէն,
սակայն ես ոչ գայթակղեցաց . ” Մատ.
12. 55 : Ուր է այն յանդուգն Ախ-
մանը, որ Յիսուսի տնօրէնութեան
կատարմանը դիմադրելով և նորա հետ
կագելով կազաղակէր . “ Քան լիցի
քեզ տէր, մի եղիցի քեզ այդ : ” Ախ-
ման ոչ եւս է, և ոչ երեւի տեղի նո-
րա : Բայց ուր է նմանապէս այն Ախ-
մանը որ կ'ուրանար իւր Տէրը և ի ար-
դապետը . Չը կայ այս Ախմանը իւր
թղթերուն մէջ, անհետացած և ը-
քացած է նա, ոչ միայն Փրկչի առ-
ջեւ, այլ և նոցա առջեւ, զօրս ՚ի
պատերազմ կ'առաջնորդէր խաւարի
դէմ : Ախմանը փախուած է ՚ի զգօն,
քաղցր, մարդառէր և հեղահամբոր

ծառայ Կատուծոյ և մարդկան : Ախման
դարձած է հրաշալի տիպար խօնար-
հութեան և ամբեծութեան :

Արդ այս ամենը յառաջ բերելէն
զինի՝ շարունակենք այժմ ամեն կող-
մէն պարզել խնդիրը և ակներեւ ցոյց
տալ աւետարանական ճշմարտութեց
այն փրկարար արդիւնքը, զոր մար-
դիկ կարող են քաղել ու զիղ մեկնե-
լով և հասկնալով Կատուծոյ խօսքը :

(Ըստ Անդրեակիլէ :

ՍՈՒՐԲ ՑԵՂԵԱՑ ԽՆԴԻՐԸ

(Կարունակութիւն, առև թիւ 2+)

“ Այն չնորհքը կորսնցուցած չեմ
համարեր, լսաւ Պ. Հիւպատոսը,
քանի որ դուք առատասիրտ էք և նե-
րողամիտ Հայր . դարձեալ պիտի շը-
նորհէք նոյն արտօնութիւնն, որց
վասն դեռ ես իմ յոյս կտրած չեմ.
և կը թախանձեմ և պիտի թախան-
ձեմ որ ընդունիք սոյն խնդիրս, և
թոյլատրէք Լատինաց գալ իւրեանց
պատարազը ընել դարձեալ, և ես
ինչպէս փոքր մի յառաջ ալ ասացի,
պէտք եղածները պիտի ըսեմ և պի-
տի պատուիրեմ, որ այսուհետեւ եր-
բէք ձեր իրաւունքին չդպջին, և նա-
շանոր սովորութիւններ չհաստատեն
և զձեզ չլինացնեն : ”

Եւ աւելցուց Պ. Հիւպատոսն ը-
սելով թէ, “ Ի՞նչ պատուական եկեղե-
ցի ունիք եղեր, ասոր նմանը չունաց
Լիրուաղէմի մէջ, իրաւ որ կ'արժէ :
Ուրեմն Արքազան Հայր, երջանիկ էք
դուք և ձեր ազգը, որ Ասուրը Լիրու-
աղէմի մէջ, պատուական Պատրիար-
քարան մի ունենալէ յետոյ այսպէս